

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆՁԵԱԿԱՆԸ»  
 ԴՈՒՆԻ ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄՆ ԸՍՏ  
 ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԻ

Արդի հայ գրականության ակնառու ձեռքբերումներից է Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը, որը գաղափարական և գեղարվեստական բարձր արժանիքներից բացի ունի նաև լեզվական ինքնօրինակ արտահայտվածություն: Այս պոեմի ստեղծագործական ընթացքը գրեթե զուգահեռ է եղել հեղինակի անցած գրական ճանապարհին: Ինչպես «Աիամանթո և Խջեզարե» պոեմը, այս դեպքում ևս բանաստեղծը կորստի թեմային անդրադառնում է գեղարվեստական որոշակի մտահղացմամբ, այսինքն՝ պատումի իրական հիմքը վեր է հանվում բանաստեղծական ձևակերպմամբ, և այն վերջիվերջո վերաճում է բավականին ստույգ և անառարկելի գրական փաստի:

«Դանթեական զուգորդությունը չէր կարող անարժագանք մնալ երկրորդ համաշխարհային պատերազմի ահեղ թվականներին՝ ֆաշիստական բարբարոսության խրախճանքի տարիներին: Հենց այդ ժամանակ էլ տակավին երիտասարդ Շիրազը, ինչպես վկայում են ժամանակակիցները, գրում է «Հայոց դանթեականը» պոեմի առաջին տարբերակը՝ հայոց չարաղետ ճակատագրի միջոցով հնչեցնելու պատերազմների՝ մարդկության և կյանքի մեծագույն թշնամու դատապարտման թեման», - գրում է Ս. Աղաբաբյանը «Հայոց դանթեականը» պոեմի ամբողջական հրատարակության կապակցությամբ, գրքի վերջում որված հակիրճ, միաժամանակ բովանդակալից խոսքում, որի շարունակությունը հետևյալն է. «Ինչ-ինչ պատճառներով ոչ պոեմի ծննդյան թվականներին, ոչ էլ հետագայում «Հայոց դանթեականը» չի արժանանում տպագրության բախտին՝ «անհայտության» տարիների ընթացքում նախնական տարբերակից վերաճելով հայոց պատմության եղեռնական անցքերի մասին պատմող *մոնումենտալ* կտավի (ընդգծումը հեղինակինն է. - Ս.Յ.)»<sup>1</sup>:

Այդ մասին ավելի մանրամասն անդրադարձ ունեն հետագա ուսումնասիրողներն իրենց գրականագիտական տարաբնույթ աշխատանքներում<sup>2</sup>:

<sup>1</sup> Ս. Աղաբաբյան, Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը». Տես *Հովհաննես Շիրազ, Հայոց դանթեականը*, Երևան, 1991, էջ 338-339: Այսուհետև, ստորև բերվող բնագրային օրինակները վերցված են պոեմի այս հրատարակությունից՝ փակագծերում նշելով միայն համապատասխան էջը:

<sup>2</sup> Տես, օրինակ, Ս. Պ. Սուրդյան, *Գրական հանգրվաններ*, գիրք Բ, Եր., Երևանի համալս. հրատ., 2007: *Նույնը*, Դանթեականի երկու ըմբռնում Զարենց - Շիրազ, «Զարենցյան ընթերցումներ», գիրք 8, Եր., 2008, էջ: *Նույնը*, Մեծ եղեռնի արժարժումները Հովհաննես Շիրազի բանաստեղծություններում, «Էքմիածին» (ամսագիր), 2009, Դ (ապրիլ), էջ 68-86:

Ըստ Ս.Պ.Մուրադյանի՝ «Հայոց դանթեականը» պոեմը գրվել է կոնկրետ շարժառիթի բերումով, դեռևս երկրորդ համաշխարհայինի անլուր վայրագություններից մեկի դիպվածով, որն էլ ազդակ է դառնում բանաստեղծի համար տասնամյակներ շարունակ գրելու և մշակելու հայոց եղեռնի թեման՝ իբրև «իր կյանքի գլխավոր գիրք»<sup>3</sup>: Ինչպես բանաստեղծի մյուս ստեղծագործություններում, այնպես նաև «Հայոց դանթեականը» պոեմում բառապաշարի առանձնահատկությունների տեսակետից ամենից առաջ աչքի են զարնում բառային նորաբանությունները, մասնավորապես նորակազմ բառերը: Դրանք պոեմին հաղորդում են մտածողության թարմություն, և գեղարվեստական պատկերը դառնում է ինքնատիպ ու տպավորիչ: Շիրազի բանաստեղծական խոսքն առհասարակ անպակաս չէ նոր բառերով ու բառային արտահայտություններով, որոնք ոչ միայն հեղինակային են, այլև առնված են մայր ժողովրդի խոսակցական լեզվի բառապաշարի հարուստ գանձարանից: Դրանցով հեղինակի ասելիքը հաճախ ստանում է իմաստուն արտահայտության, թևավոր խոսքի արժեք: Այն բառերը, որոնք առաջին հայացքից թվում են, թե նորություն են բանաստեղծի այս պոեմում, և ըստ այդմ նոր են նաև հայերենի բառապաշարի մեջ, ստուգել և ծձգորտել ենք ժամանակակից հայերենի ամենածավալուն բառարաններով: Նկատի ենք ունեցել առաջին հերթին Ստ. Մալխասյանցի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեղինակային կոլեկտիվի և Է. Բ. Աղայանի բացատրական բառարանները<sup>4</sup>: Նկատի ենք ունեցել նաև հետազայում կազմված մասնավոր մի քանի բառարանների տվյալները<sup>5</sup>: Հիշյալ բառարանների տվյալների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ նորակազմություն դիտվող բառերը միատեսակ չեն, այլ բաժանվում են մի քանի խմբի: Բաժանումը կատարում ենք երկու հատկանիշով, ըստ այնմ, թե՛ ա) բառարաններից որո՞ւմ կան որոնցո՞ւմ կա տվյալ բառը, բ) եթե կա, ապա ինչպիսի՞ բնագրային վկայակոչումով է այն հաստատվում, այսինքն՝ Հովի. Շիրազի՞, թե՞ այլ հեղինակի կամ հեղինակների երկերի տվյալներով:

Ասյն հողվածում անդրադառնում ենք երկու կարգի բառերի:

4. Շ. Գաբրիելյան, «Հայոց դանթեականը» քերթվածի գեղարվեստական համակարգի շուրջ, «Էքմիաժին» (ամսագիր), Դ (ապրիլ), 2009, էջ 87-97:

<sup>3</sup> Ս.Պ. Մուրադյան, Սեծ եղեռնի արժարժունները Հովհաննես Շիրազի բանաստեղծություններում, էջ 71:

<sup>4</sup> Ստ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Հայկ.ՍՍԻՊՆ Դես. հրատ, Երևան, 1944-1945 (այսուհետև՝ ՍԲԲ): Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969-1980 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ): Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976 (այսուհետև՝ ԷԱԲ):

<sup>5</sup> Տես Ս. Մելքոնյան, Հովհաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), Երևան, 1993: Փ. Մեյթիխանյան, Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, 1996: Ա.Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002 և այլն:

1) Բառեր, որոնք չկան ՄԲԲ-ում, այլ կան ԺՅԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, սակայն ԺՅԼԲԲ-ում դրանք բերվում են բնագրային այս կամ այն կարգի վկայությամբ, իսկ ԷԱԲ-ում չի նշվում բնագրային որևէ վկայություն:

2) Բառեր, որոնք չկան ՄԲԲ-ում, այլ կան միայն ԺՅԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, սակայն այս վերջին երկուսում բերվում են բնագրային վկայություններ ոչ միայն Գովհ. Շիրազի, այլև ուրիշ հեղինակների երկերից կամ թարգմանություններից: Առաջին կարգի բառերը համեմատաբար ավելի շատ են, քան երկրորդ կարգի բառերը: Ըստ այսմ ճշգրտվում է ոչ միայն նորակազմ բառերի հեղինակային պատկանելությունը, այլև այն հաստատվում է բնագրային կոնկրետ վկայությամբ, այսինքն՝ լրացվում է վերջինիս հետ կապված հիշյալ բառարաններում տեղ գտած բացը:

1. Նախ անդրադառնանք առաջին կարգի բառերին: Ամենից առաջ նկատենք, որ դրանք այնքան էլ քիչ չեն, շուրջ երեք տասնյակ:

Ինչպես գիտենք, է. Աղայանի բառարանում, բացառությամբ շատ հազվագյուտ դեպքերի, չեն տրվում բնագրային օրինակներ՝ իբրև հիմնավորում տվյալ գլխաբառի գոյության կամ հայերեն նոր գրավոր աղբյուրներում գործածության: Ուստի այդ բառերի մասին տվյալ դեպքում հնարավոր չէ խոսել՝ որպես Շիրազի երկերի բառապաշարի միավորների: Իսկ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» սովորաբար բերվում են բնագրային վկայություններ՝ քաղված կամ Շիրազի, կամ նրան ժամանակակից մեկ ուրիշ գրողի ստեղծագործությունից, ինչպես նաև մասուլից: Այս դեպքում էլ դժվարություն է հարուստում այն, որ նշվում է միայն հեղինակը և ոչ նաև վերջինիս այն ստեղծագործությունը, որից քաղված է տվյալ օրինակը: Ուստի ստորև բերվող նորակազմ բառերի հեղինակային և բնագրային ճշգրտմամբ, թերևս, ինչ-որ չափով լրացվում է հիշյալ բառարաններում տեղ գտած այդ կարգի բացը: Դրանք ըստ խոսքի մասերի երեք տեսակ են՝ գոյական, ածական և բայ: ա) Գոյականները, բացառությամբ *այլառհմակ* բառի *գայլոհմակ* գրային տարբերակի, այլև *հուշաշխարհ* բառի, հիմնականում *ա*՝ հոդակապով բաղադրված բառեր են, և միայն մեկ դեպքում ունենք ածանցավոր բառ՝ *ոգորանք*: Նկատի ունենք հատկապես հետևյալ գոյականները:

*Գայլառհմակ* և *գայլոհմակ* տարբերակներից առաջինը կա ԺՅԼԲԲ-ում և ԷԱԲ-ում: ԺՅԼԲԲ-ն բացատրում է՝ «գայլերի ոհմակ՝ խումբ»: Իսկ ԷԱԲ-ն նշում է մի դեպքում իբրև գոյական՝ «գայլերի ոհմակ», մյուս դեպքում՝ իբրև ածական՝ «գայլերի ոհմակ ներկայացնող, գայլաբարո մարդկանցից բաղկացած՝ գունարված»: ԺՅԼԲԲ-ն բնագրային վկայություն է բերում Ս. Խանգաղյանի երկի հետևյալ նախադասությունը. «Սկզբում կարելի էր տարբերել մեծ ու մանր հրանոթների ծայները, ինչպես *գայլառհմակի մեջ*՝ ձագերի ու մայր գայլերի ոռնոցը»: Այնինչ, ԷԱԲ-ն չունի բնագրային վկայություն:

«Յայոց դանթեականը» պոեմում բառը գործածված է մեկից ավելի անգամ. Թուրքն հայի ձեռքով ցցի չի հանվի. /Եղնիկը բարձր է՝ իր ոսոխ գայլից.../ Գառների հուտը՝ *գայլառհմակից* (էջ 200): - Եղեռն է, բա ի՞նչ... ձեր վերջն է, գյավուր, /Յան...մեզ չեն բռնի անեծքները գուր, / Յան հարսնատսկիդ ալլաիի առջև:- / Եվ մոլեգնել է *գայլոհմակը* սև (283-284)<sup>6</sup>: Տվյալ դեպքում դեպքում իրար ժամանակակից անվանի գրողներից բերված օրինակներից մեկին կամ մյուսին առաջնություն տալու միակ կովանը թերևս կարող է լինել այն, թե երբ է լույս տեսել Ս. Խանզադյանի երկը, որպեսզի ժամանակի տեսակետից համեմատության մեջ դրվի «Յայոց դանթեականը» պոեմի հետ:

*Եղեռնապատում* բառը կա ԺՂԲԲ-ում և ԷԱԲ-ում. առաջինում բառը նշվում է իբրև ածական՝ «ոճիրների մասին պատմող՝ վկայող», իբրև գոյական՝ «պատմություն ոճիրների մասին»: Ածականական կիրառության համար բնագրային վկայություն է բերված Գ. Էմինից. Օ, ինչ հաճույքով *եղեռնապատում* Բոսֆորը արնոտ երախը փակած, կխեղդեր նրանց իր սև կոկորդում: Իսկ «Յայոց դանթեականը» պոեմում այն գործածված է և որպես ածական, և որպես մակբայ, ընդ որում կան մեկից ավելի օրինակներ. Յայության կարմիր արցունքն էր տանում՝ / Կաթած աչքերից կապույտ ջրերում բացված վերքերի, / Ու ողբերգում էր *եղեռնապատում* գետն ինքն էլ գերի (էջ 216): Ես դարերին եմ ավանդում դժոխքն իմ ազգակրոնյս, / *Եղեռնապատում* դատաստանագիրքն իմ այս բազմահոծ (էջ 259): Անվերջ իրար եք անմիտ գիշատում... / Քիչ մնաց ձեր իսկ ձեռքով ձեզ կախեն, / (Որ ժայթքեմ մի նոր *եղեռնապատում*...) (էջ 282):

*Թրախաչ* բառը ԺՂԲԲ-ում բերվում է իբրև «մի տեսակ բուսանուն»՝ օրինակ վերցնելով մանուկից. «Յեղիների տարերքը կռվում էր թրաշուշանների ու սև *թրախաչի* միջև»: ԷԱԲ-ում բացատրվում է՝ «թրանման, թևերով խաչ»: Այնինչ «Յայոց դանթեականը» պոեմում այն գործածվում է իբրև «զենքի մի տեսակ. կռվի մի միջոց»: Ունենք մեկից ավելի անգամ գործածված. Ոչ մեկիդ սուրը մի ձայն չհանեց, / Մի շանթ չհանեց ոչ մի *թրախաչ*, / Չթուրվեց մի խաչ՝ ի սաստ ոսողի (էջ 118): Դուք կարող էիք եղեռնից փրկել ազգս արմաքամ, / Փրկել շղթայված հողն Արարատի, / Բայց չբանակվեց ոչ մի *թրախաչ* / Անհավատի դեմ ձեր մահ Մահմեդի (էջ 123):

*Ծաղկածով* բառը ԺՂԲԲ-ում, իբրև գոյական, նշանակում է «ծաղիկների առատություն, ծաղիկների ծով», որի համար բնագրային օրինակ է վերցված Յովի. Շիրազի մեկ այլ ստեղծագործությունից. «Ով բռռ, մի՞թե մեղուն իր կյանք *ծաղկածովը* կանիծե, / Որ կնքում ես ինձ այլամերժ և իմ բախտն ես քարկոծում»: ԷԱԲ-ում բացատրվում է «ծաղիկների ծով, ծաղիկների մեծ

<sup>6</sup> Վերջին օրինակում բառի առանց հոդակապի գործածությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է բանաստեղծական տողի համագավորման համազամանքով:

առատություն»։ Այս բառը գտնում ենք նաև «Հայոց դանթեականը» պոեմում՝ մի քանի անգամ գործածված։ Օրինակ՝ Եվ արցունքները հիշեցին ծովը սուրբ մեղրահացի, / Եվ միշտ *ժաղկածով* Սիփան սարերը՝ բույն դառած օծի (էջ 104)։ Մուռն *ժաղկածովն* էլ ոտի եր կանգնում, / Մեր ուղքն էր ծովը, քրոջ պես, ընկնում (էջ 138)։ *Հուռաշխարհ* բառը ԺՂԼԲ-ում, իբրև գոյական, բացատրված է «հուլեր հարուցող աշխարհ, հիշատակների աշխարհ», և բնագրային վկայություն է բերվում Հովհ. Շիրազի մեկ այլ ստեղագործությունից։ Հոգիս ծարավեց խորհող լուծթյան, և խուլ ժխորից մտա բանգարան...սիրտս հիացք դարձավ այն *հուռաշխարհում* մտախոհ ու սեզ»։ Եվ ԷԱԲ-ում բացատրվում է գրեթե նույն կերպ՝ նշելով իբրև բանաստեղծական բառ։ Այս բառը կա նաև «Հայոց դանթեականը» պոեմում՝ մեկից ավելի գործածությամբ. Դեպի Վան, Բիբլիս, դեպի *հուռաշխարհ*, / Դեպի անմահը մահվան դաշտերի (էջ 39)։ Եկ իջնենք մոայլ *հուռաշխարհները* և աչքովդ տես, և թարթիչներդ կայրվեն անգամ հուռերի հրդեհներից (էջ 80)։ *Ոգորանք* բառն, ըստ ԺՂԼԲ-ի, իբրև գոյական, նշանակում է «կռիվ, պայքար», ընդ որում համարվում է հազվադեպ գործածության բառ՝ վկայակոչելով Հովհ. Շիրազի հետևյալ օրինակը. «Ու *ոգորանքով* հաղթեց այն վշտին»։ ԷԱԲ-ում նույնպես բառը դիտվում իբրև գոյական՝ «կռիվ, պայքար, մարտնչում» իմաստով։ Բառը կիրառվել է նաև «Հայոց դանթեականը» պոեմի հետևյալ նախադասության մեջ. Եվ խանձահողը այրվող դիերի, / Եվ հազարածիչ *ոգորանքն* անհույս (էջ 180)։

*Պատժավայր* բառը ԺՂԼԲ-ում, իբրև գոյական, բացատրվում է «պատժելու վայր, պատիժը կրելու տեղ», ընդ որում վկայակոչվում է Ստ. Ջորյանի հետևյալ օրինակը. «Նշանակում է՝ այդ կուսանոցները միայն աղոթքի ու ապաշխարության վայր չեն, այլև բանտեր ու զնդաններ, *պատժավայրեր*»։ ԷԱԲ-ում նույնպես բառը դիտվում իբրև գոյական՝ նույնպիսի բացատրությամբ։ Բառը գործածված ենք գտնում նաև «Հայոց դանթեականը» պոեմում. Ցույց տալով խորքերն հնոց դժոխքի, / *Պատժավայրերը* ընդերկրյա խորքի, Հանցանաց մեղքի պտժավիները (էջ 167)<sup>7</sup>։ *Պտուտահողմ* բառը ԺՂԼԲ-ը, իբրև գոյական, բացատրում է «պտույտ գործող հողմ, գալարահողմ, մրրիկ»՝ վկայակոչելով Ս. Խանգադյանի երկի օրինակը. «Գետնից ու ծառերից պոկվեց ծյունը և *պտուտահողմ* կազմելով՝ սլացավ հեռուները։ ԷԱԲ-ում նշվում է բառը՝ հղելով *պտուտահողմ* ձևին։ Բառը գործածված է նաև «Հայոց դանթեականը» պոեմում. Ու ծառս եղան այս ու այն կողմ / Թուրքերն ինչպես *պտուտահողմ* (էջ 306)։

<sup>7</sup> Բառի հեղինակային առաջնության առումով թերևս միտումը դեպի Ստ.Ջորյանը լինի՝ տարիքային երկուսուկես տասնյակի տարբերության համեմատանքով (Ստ.Ջորյանը ծնվել է 1889 թ., իսկ Հովհ. Շիրազը՝ 1914 թ.)։ Այսուհանդերձ բառը բերում ենք նաև «Հայոց դանթեականը» պոեմում կիրառված օրինակով՝ հատկապես նկատի ունենալով համատեքստի ոճական կողմը։

բ) Ածականները նույնպես ա հողակապով կամ առանց հողակապի բարդ բառեր են, միայն մեկ դեպքում է, որ ածանցավոր բառ է՝ *մեղսական*։ Ընդ որում բարդության երկրորդ բաղադրիչը, որպես կանոն, բայարմատ է կամ բայահիմք, երբեմն՝ գոյական, իսկ առաջին բաղադրիչը՝ գոյական, ածական կամ թվական։ Նկատի ունենք հատկապես հետևյալ ածականները։

*Թրահար* բառը ԺՂԼԲ-ում բերվում է «թրով հարվածված, թրով վիրավորված» իմաստով, ընդ որում *թրահար անել* հարադրությամբ՝ «թրով հարվածներ հասցնել, սրահարել», և օրինակ է բերվում Ս. Խանգաղյանից. «Երկուսով սկսեցին *թրահար անել* թշվառներին»։ ԷԱԲ-ում բացատրվում է ճիշտ նախորդի պես՝ «թրով հարվածված՝ խփված»։ Իսկ «Չայոց դանթեականը» պոեմում բառը գործածվում է նույն իմաստով՝ *իբրև* հարադրության անվանական բաղադրիչ. Չրաման հաչեց գերման գորբերին իր զինաշառաչ. /- Վեր անգթացեք՝ բորենուց էլ վեր, / *Թրահար արեք* օրոցքներ ծծկեր, / ճեղքեք որովայն հղի հարսների... (էջ 1279)։ Որ թրամերկ առաջ սուրաց, / Ու *թրահար արավ* մեկից / Յոթն ասկյարի... (էջ 313)։

*խաղաղատենչ* բառը ԺՂԼԲ-ում բերվում է երկու՝ «խաղաղություն տենչացող», որի համար վկայություն կա մամուլից, և «խաղաղության տենչ արտահայտող» իմաստով՝ բնագրային օրինակ վերցված Չոլի. Շիրագից. «Ինձ պակաս է մի Աղավնի... Անուշ մի կանչ *խաղաղատենչ*»։ ԷԱԲ-ում բացատրվում է ճիշտ նախորդի պես՝ «խաղաղություն տենչացող՝ փափագող» և «խաղաղատենչություն արտահայտող»։ Այս բառը գտնում ենք նաև գործածված «Չայոց դանթեականը» պոեմի հետևյալ նախադասության մեջ. Գնանք, ուրեմն, իմ մայր ժողովուրդ, ահա քո մայր Արաքսն էլ գնում է ծովերը՝ քո *խաղաղատենչ* եղբայրությունը խառնելու աշխարհի ծովերին (էջ 36)։

*Կիսակենդանի* բառը չունի ԱԲԲ-ը, թեև ունի *կիսակենդան* ածականը, որը կա նաև հետագա բառարաններում։ Իսկ ԺՂԼԲ-ում, իբրև ածական, *կիսակենդանի* նշանակում է «կիսով չափ կենդանի՝ կենդանական կյանք ունեցող էակ», որի համար բնագրային օրինակ է վերցված դասագրքից։ ԷԱԲ-ում բացատրվում է ճիշտ նույն կերպ՝ «կիսով չափ կենդանի՝ կենդանական կյանք ունեցող էակ»։ Այս բառը գտնում ենք նաև «Չայոց դանթեականը» պոեմում՝ գործածված մի քանի անգամ. Մինչ ամենատես աչքի տակ լուսնի,- /Գեթ ամենատես լուսնից չի քաշվում,- / Չոհերի առջև *կիսակենդանի* / Չանած ատամներն՝ ավարն է հաշվում (էջ 146)։ Դարծյալ Մասիսին ծյուն պիտի դնի՝ / Ամենեղության պես Մասիսի տիրոջ, / Դարծյալ արգանդից *կիսակենդանի* / Չայն աշխարհ կգա՝ հայ հողով իր ողջ (էջ 325)։

*Չազարազանգ* բառն, իբրև ածական, ԺՂԼԲ-ն բացատրում է «հազարավոր զանգերով դողանջող», որի համար բնագրային միակ օրինակը վերցված է Չոլի. Շիրագի հայտնի բանաստեղծությունից. «Լցված կյանքով

*հազարազանգ / Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»*. թերևս ավելի ճիշտ կլիներ (փխբ.) «հազարավոր եկեղեցիներ՝ եկեղեցիների զանգեր ունեցող» իմաստով բացատրությունը: ԷԱԲ-ում բացատրվում է գրեթե նույն կերպ, ինչ ժՂԼԲ-ում՝ ավելացված բառի փոխաբերական իմաստը: Այս բառը գտնում ենք նաև «Հայոց դանթեականը» պոեմում. Բայց վանքն ի՞նչ, թեկուզ *հազարազանգով... / Չփրկվեց վանքն էլ թեկուզ մի գիշեր* (էջ 176): *Հազարակնյա* բառը, որ նշանակում է «հազարավոր ակունք՝ աղբյուր ունեցող», ժՂԼԲ-ում բերված է Ս.Խանգադյանի հետևյալ օրինակի հիման վրա. «Հեռվում...երևում էր լեռնաշխարհի վրա բազմած *հազարակնյա* Արամազդ լեռը»: Այն կա նաև ԷԱԲ-ում՝ նույն կերպ բացատրված: «Հայոց դանթեականը» պոեմում բառը գործածված է հետևյալ նախադասության մեջ. Հանեց մեզ Ակնից՝ մեր հին վահագնյա, / Դուրս վանեց՝ խլեց Ակնը մեր լացով, / Հանեց Բյուրակնից մեր *հազարակնյա*, / Դուրս վանեց՝ խլեց Բյուրակնը մեր ծով (էջ 250):

*Հայախառաչ* բառը ժՂԼԲ-ում, իբրև ածական, բացատրված է երկու կերպ, որից երկրորդը նշանակում է «հայերին՝ հայությանը հառաչեցնող», և օրինակ է բերվում Հովի. Շիրազի մեկ այլ ստեղծագործությունից. «Քո աճյունն հագիվ տուն բերինք եղեռնից այս *հայախառաչ*»: Իսկ ԷԱԲ-ում բացատրվում է «հայերին հառաչել տվող»: Այս բառը գտնում ենք նաև «Հայոց դանթեականը» պոեմում՝ կիրառված մի քանի անգամ. Ու զրի առանք այս մեղսածովն էլ մենք *հայախառաչ* / Սեզ լեզու հանող մահիկի առաջ... (էջ 60): Ով Դանթե, շիթ է երգիդ դժոխքը այս ծովի առաջ, / Ժպիտ է՝ առջև իրականության այս *հայախառաչ* (էջ 256): Քար մարդկության աչքի առաջ, / Դարբած հայ ծով արյան գինով՝ / Այն օրերում *հայախառաչ*, / Որ դարերից ծանր են վշտով (էջ 334):

*Հոգեխռով* բառը ժՂԼԲ-ում, իբրև ածական, բացատրված է «խռովված հոգով, հուզված»՝ օրինակ բերելով Շիրազի մեկ այլ ստեղծագործությունից. «Խոցված և տրտում ու հոգեխռով տուն վերադարձիս՝ որդիս հույսի պես իմ գիրկն է ընկնում»: ԷԱԲ-ում բացատրվում է՝ «հոգի խռովող՝ հուզող», այլև «հոգին խռովված՝ հուզված»: Այս բառը գտնում ենք նաև բանաստեղծի «Հայոց դանթեականը» պոեմում. Ու *հոգեխռով / Դեռ անցնում էինք*, երբ դր հայ մի կին / Խելագարվելով փախչում էր ճիչով. / Սորթոտել էին յոթը զավակին... (էջ 64):

*Մանկաբարձ* բառը ժՂԼԲ-ում, իբրև ածական և գոյական, բացատրված է երկու կերպ՝ սովորական իմաստով և (հազվադեպ գործածությամբ) «հովանավոր, պաշտպան»՝ փոխաբերական իմաստով, ընդ որում վերջինիս համար օրինակ է վկայաբերված Գ. Էմինից. «Մենք մանկաբարձ ենք ամեն մի նորի»: ԷԱԲ-ում բառը դիտվում է միայն չոյական, մեկ՝ «մանկաբարձության մասնագետ բժիշկ», մեկ էլ՝ (փխբ.) «պաշտպան, հովանավոր, սատար» բացատրությամբ: Բառը գործածվել է նաև «Հայոց դանթեականը» պոեմում, ընդ

որում բուն իմաստով՝ իբրև ածական. - Օ, անճեղ, ինչպես մեղուն թավաբեղ, /  
Ինչպես *մանկաբարձ* դայակը՝ սրտեղ (էջ 147):

*Մեղսական* բառը ժՂԼԲԲ-ում, իբրև ածական, բացատրված է երկու  
կերպ՝ «մեղքով լի» և «մեղավոր ձգտումներ պարունակող, դատապարտելի»:  
Առաջինի համար օրինակ է վկայաբերված արծակագիր Վ. Խնչունյանից.  
«Դրսում պարիսպներից դուրս կյանք կա, *մեղսական* հրապույր»:  
ԷԱԲ-ում նույն-  
պես բառը դիտվում է միայն ածական, ընդ որում նշանակվում է ևս երկու այլ  
իմաստով՝ «մեղք՝ հանցանք հանդիսացող» և «ախտավոր, մոլի, դատապար-  
տելի»:  
Բառը գործածվել է նաև «Հայոց դանթեականը» պոեմում, ընդ որում  
բուն իմաստով՝ իբրև ածական. Պատառոտվում էր մեր դեմ մութն այնքան, /  
Թվում էր բոցե դաշույններ էին / Թռչում պատյանից մութի *մեղսական*... (էջ 172):

*Սմբակահար* բառը ժՂԼԲԲ-ում, իբրև ածական, նշվում է՝ նույնն է  
*սմբակակոխ*, և բնագործն վկայակոչվում է Ս. Խանգաղյանի հետևյալ  
օրինակը. «Այսպես *սմբակահար* կանեմ, ով կհամարձակվի հեռանալ իմ  
գյուղից,- գոռում էր Մելիք-Բարխուդարը»:  
Իսկ ԷԱԲ-ում բացատրվում է բառը՝  
«սմբակ(ներ)ով հարվածված՝ ծեծված, սմբակածծ»:  
Այս բառը կա նաև «Հայոց դանթեականը» պոեմում. Ցածուն՝ խաչքար էր Մասիսն էլ ինքը / Տակին  
աճյունվող իմ հայրենիքը, / Որ *սմբակահար* / Ընկավ, ով աշխարհ (էջ 78)<sup>8</sup>:

*Սրտասև* բառն, ըստ ժՂԼԲԲ-ի, ածական է, նշանակում է «սիրտը սև,  
սևասիրտ», և բերվում է Հոփի. Շիրագի հետևյալ օրինակը՝ անենայն հավա-  
նականությանը «Սիամանթո և Խնչեզարե» պոեմից առնված. «Ասում են, թե չկար  
երկրում ոչ մի ծաղիկ՝ սիրտը սև. / Այն օրվանից աշխարհ եկան կակաչները  
*սրտասև*»:  
ԷԱԲ-ում բառը նշվում է երկու՝ սովորական և փոխաբերական  
իմաստներով, այսինքն՝ «սիրտը սև, սևաթույր սրտով», որի համար նշվում է  
*սրտասև կակաչ* արտահայտությունը (հավանաբար Հոփի. Շիրագի հիշյալ տողը  
նկատի ունենալով), այլև «սգավոր, վշտահար»:  
Բառը գտնում ենք բա-  
նաստեղծի նաև «Հայոց դանթեականը» պոեմում. Ծածկեն տաճարներն հայոց  
*սրտասև* սուգի մարմաշով, / Սևասև հագնեն ողջ աշխարհով մեկ հավեր-  
ժավաշով (էջ 43):  
*Սևամայ* բառն, ըստ ժՂԼԲԲ-ի, իբրև ածական, նշանակում է  
«սև ամպերով պատած», և բերվում է մամուլից հետևյալ օրինակը. «Վերում *սև-  
ամայ* մի երկինք է, ցածուն՝ անդունդ»:  
ԷԱԲ-ում բառը նշվում է երկու՝  
սովորական և փոխաբերական իմաստներով, այսինքն՝ «սև ամպերով պատ-  
ված՝ ծածկված», որի համար նշվում է *սևամայ երկինք* արտահայտությունը,  
ինչպես նաև «սև ամպի նման, մռայլ, տխրագին»՝ այս դեպքում էլ նշելով

<sup>8</sup> Ս. Խանգաղյանի «Մխիթար սպարապետ» վեպը, որից վերցված է հիշյալ օրինակը.  
ավելի վաղ է լույս տեսել, քան Հոփի. Շիրագի «Հայոց դանթեականը»:  
Այդուհանդերձ, բառը բերում ենք նաև բանաստեղծի բնագրի օրինակով՝ նկատի ունենալով անվանի  
գրողների ժամանակակից, եթե ոչ նաև տարեկից լինելը:



*սևամպ խոհեր* արտահայտությունը: Բառը հանդիպում է նաև «Հայոց դանթեականը» պոեմում՝ գործածված մի քանի անգամ. Եվ անցնում էինք լուսնի պես *սևամպ*, / Եվ իմ ճակատին՝ խոսող լուսթյամբ / Դանթեն իմ հայոց մատյանն էր թերթում (էջ 43): Գետն էին նետվում աչքերով *սևամպ* / Որսկանից փախչող եղինկների պես՝ / Կույս աղջիկները մեկ-մեկ, բազմությամբ (էջ 217):

*Տիեզերավիշտ* բառն, ըստ ԺՂԼԲԲ-ի, իբրև ածական, նշանակում է «ամբողջ աշխարհին՝ մարդկությանը վիշտ պատճառող», և բերվում է բնագրային վկայություն Յովհ. Շիրազի մեկ այլ ստեղծագործությունից. «Ինձ ասում են ինչո՞ւ...ես Մերթ նգովում *տիեզերավիշտ* ամեն զենք ու զրահ, Մերթ Վարդանն ես Ավարայրի, Մերթ տխական ես նրա»: ԷԱԲ-ում նշվում է բառը երկու իմաստով՝ «տիեզերական՝ համամարդկային վշտով համակված՝ լցված», «տիեզերական՝ համամարդկային վիշտ պատճառող, ամբողջ մարդկությանը վիշտ պատճառող»: Բառը կա նաև «Հայոց դանթեականը» պոեմում՝ գործածված վերնագրերից մեկում. Գիշեր, *տիեզերավշտի* գիշեր (էջ 159):

*Տեղասպան* բառն, ըստ ԺՂԼԲԲ-ի, իբրև ածական, նշանակում է «ցեղը՝ ժողովուրդը ամբողջությամբ կամ մասամբ սպանող՝ ջնջող՝ վերացնող», և բերվում է բնագրային վկայություն Ս. Կապուտիկյանից. «*Տեղասպան* թշնամու ձեռքով նահատակված մեր միլիոնավոր զոհերը ձեզ են կտակել իրենց ամենամեծ հարստությունը՝ իրենց կիսատ մնացած կյանքը»: ԷԱԲ-ում նշվում է բառը սովորական բացատրությամբ՝ «ցեղը՝ ազգը սպանող, ոչնչացնող»: Բառը կա նաև «Հայոց դանթեականը» պոեմում՝ հաճախակի գործածված. Լոխմանի աչքից վերքը թաքցնողն անբույժ կմնա, / *Տեղաըսպանի* ճամփեն չքանդողն՝ հազար կբանա... (էջ 40)<sup>9</sup>: Ետևից Դանթեն՝ ոգեորդու պես, / Դեռ իջնում էինք, իրար հենակված, / Դեպի *ցեղասպան* դժոխքն աղեկեզ (էջ 44): Ծովին մոտեցավ՝ լռին, զայրահար, / *Տեղաըսպանին* պատժելու համար (էջ 58): Բայց չե՞ս հարցնում, թե ո՞վ էր այս *ցեղասպան* հայասպանը (էջ 258) և այլն<sup>10</sup>:

*Ուղտընթաց* բառն, ըստ ԺՂԼԲԲ-ի, ածական է, որ նշանակում է «ուղտի նման դանդաղ ընթացող», և ըստ այդմ՝ բերվում է բնագրային վկայություն Շիրազի մեկ այլ գործից. «Մերթ *ուղտընթաց* ամպ ես անդորր, Մերթ կայծակող վայրագ»: ԷԱԲ-ում այն նշվում է սովորական, գրեթե նախորդի նման ձևակերպված իմաստով՝ «ուղտի նման դանդաղ գնացող՝ ընթացող»: Բառը գործածված է նաև «Հայոց դանթեականը» պոեմում. Անբոժժ, անգանգ՝ կանցնեին թաղման լուռ թափորի պես՝ / ...*ուղտընթաց* ու հեզ (էջ 283):

<sup>9</sup> Բառը գրված է ը-ով, ամենայն հավանականությամբ, բանաստեղծական տողի հանգավորման բերումով, ինչպես որ նաև հաջորդ օրինակներից մեկում է:

<sup>10</sup> Հանդիպում է նաև *ցեղասպանը* «ցեղասպանություն» նորակազմ բառը, որը բերված է «Հայոց դանթեականը» պոեմի բառապաշարի բնութայնը նվիրված մեր աշխատանքի «Բառարան-հավելվածում»:

զ) Բայերը համեմատաբար քիչ են, եղածներն էլ, բացի *ծնկաչոքել* բայից, մեծ մասամբ առնված են կրավորակերպ չեզոք սեռով՝ *վ* ածանցով

Նկատի ունենք հատկապես հետևյալ բայերը:

*Բռունցքվել* բառը ԺՂԼԲԲ-ում նշվում է երկու իմաստով՝ 1) կրավորականի ձև *բռունցքել* ներգործականի, 2) չբ. (փխբ.) «միավորվել՝ համախմբվել, բռունցք կազմել»: Վերջինիս համար նշվում է Յուլի. Շիրազի. Ես՝ դարեր խաբված, դարերով գարկված, / Նոր *եմ բռունցքվում* լեռներում իմ լուրք (էջ 1): Նկատենք, որ այս տողերը վերցված են բանաստեղծի «Յայոց դանթեականը» պոեմի նախերգանքից: Յայտնի է, որ պոեմն ամբողջությամբ լույս է տեսել բավականին ուշ (Երևան, 1991 թ.), քան որ լույս կտեսներ ԺՂԼԲԲ-ը (հ. 1, Երևան, 1969), ուստի մնում է ենթադրել, որ բառարանի հեղինակները ձեռքի տակ ունեցել են պոեմի հատվածաբար տպագրված տարբերակները<sup>11</sup>:

*Ծնկաչոքել* չեզոք սեռի բայը չկա ՄԲԲ-ում, կա *ծնկաչոք* ածականը: Այն հանդիպում է ԺՂԼԲԲ-ում և ԷԱԲ-ում, առաջինը բացատրում է՝ «ծնկի գալ, չոքել», նշում է հազվադեպ գործածություն ունենալը և օրինակ է բերում Յուլի. Շիրազի մեկ այլ ստեղծագործությունից. «Յայր գուսանը *չի ծնկաչոքի*»: Երկրորդը տալիս է նույն բացատրությունը: Բառը գործածված ենք գտնում նաև «Յայոց դանթեականը» պոեմի հետևյալ օրինակներում. Մայրերն անդհդում *ծնկաչոքելով* աղոթում էին / Աստծուն հայոց, անգամ ալլահին, որ փրկեր հային (էջ 298): Որտեղ մամիկներն ու տատիկները *ծնկաչոքելով*, / Չեռքերն առ Աստված՝ իրար մոգելով / Աղոթում էին... (էջ 300) և այլն:

*Հավերժվել* բայը, որ կրավորակերպ չեզոք սեռի է, չկա ԺՂԼԲԲ-ում: Վերջինս ունի *հավերժել*-ը, իբրև չեզոք սեռի բայ, բացատրված «հավերժ՝ միշտ գոյություն ունեցած», և օրինակ է բերված Ավ. Իսահակյանի հայտնի բանաստեղծությունից. «Դու, *հավերժող* իմ Յայաստան, անուն քաղցր ու վսեմ»: ԷԱԲ-ում նշվում է մեկ իբրև չեզոք սեռի բայ՝ «հավերժանալ», մեկ իբրև ներգործական սեռի՝ «հավերժացնել»: Այս բառը կա նաև «Յայոց դանթեականը» պոեմում՝ կիրառված մի քանի անգամ, ամեն անգամ միայն իբրև կրավորակերպ չեզոք սեռի բայ. Փյունիկվելու է հայ ազգը նորից, / Վայրի եղնիկի հետ էլ՝ գգվելով՝ / Աշխարհ է գալու ազգն *հավերժվելով* (էջ 98): Մասյաց ծյունի պես մաքուր ես եղել, *հավերժվես* մաքուր՝ / Գեթ լուսաստղի չափ լույս տաս անսնգույր (էջ 333):

*Մշուշվել* բայը ԺՂԼԲԲ-ն տալիս է իբրև չեզոք սեռի՝ «մշուշապատվել» իմաստով, և օրինակ է բերված մամուլից. «Ենիլը *մշուշված* աչքերով հազիվ ջրկում էր սպիտակ խալաթ հագած բժիշկներին»: Իսկ ԷԱԲ-ում նշվում է իբրև

<sup>11</sup> Նկատենք, որ բառարանի Բ տառով սկսվող մասը կազմել է բառարանագիր Գ. Կասաբաջյանը:

կրավորական չեզոք սեռի բայ: Այս բառը կիրառված ենք գտնում նաև «Հայոց դանթեականը» պոեմում՝ հետևյալ նախադասության մեջ. Քարացավ՝ մինչև քարվանդ թշվեց՝ / Տեղահան հայ ազգն անհետ *մշուշվեց* / Դեղնադագաղում անապատների (էջ 28): *Վահանվել* բայն, ըստ ԺՂԼԲ-ի, ունի հազվադեպ գործածություն, սովորական իմաստով նշանակում է «վահանով պաշտպանվել», իսկ փոխաբերական իմաստով՝ «որևէ բանով իր անձը՝ էությունը պաշտպանել»: Վերջինիս համար բերվում է բնագրային վկայություն մամուլից. «Դերասանական հին սովորքներով *վահանված* ստեղծարար ուժն ունակ է պատռելու փակարանն ու դուրս մղվելու»: ԵԱԲ-ում այն նշվում է որպես կրավորական և չեզոք սեռի՝ հղելով *վահանել* ձևին: Բառը գործածված է նաև «Հայոց դանթեականը» պոեմի հետևյալ հատվածում. Ես նգովում եմ կույր դավն էլ ազգիս, / Որ *չվահանվեց* անգեհին հայոց (էջ 258):

2. Այժմ ներկայացնենք երկրորդ կարգի բառերը: Դրանք այնքան էլ շատ չեն, ընդ որում ըստ խոսքիմասային պատկանելության գոյական են կամ բայ: *Մագաղաթվել* բայն, ըստ ԺՂԼԲ-ի, չեզոք սեռի է, *բնտ.* (= բանաստեղծական) նշումով, գործածված երկու իմաստով՝ «մագաղաթի վրա գրվել, գրի առնվել» և ««մագաղաթի նման դեղնել, թռչնել, դալկանալ»: Առաջին իմաստի համար բերվում է բնագրային վկայություն Շիրազի մեկ այլ ստեղծագործությունից՝ «Հայոց լեզուն մշտականթեղ *մագաղաթվեց*»<sup>12</sup>: Իսկ երկրորդի համար նշվում է բնագրային վկայություն մամուլից՝ «Մագաղաթված խաղաղ դեմքին բիբլիական թախիծ՝ անլուր՝ կուչ է եկել նոր տան շենքին պառավ մի կին»: Բառը գրեթե նույն կերպ կա ԵԱԲ-ում, սակայն երկրորդ՝ «մագաղաթի նման դեղնել, թարչամել ու դալկանալ» իմաստի համար օրինակ է բերվում Կ. Միքայելյանից՝ «*Մագաղաթված* դեմք»: Այս բայի ներգործական սեռի *մագաղաթել* ձևը չկա ոչ ԺՂԼԲ-ում, ոչ էլ ԵԱԲ-ում, սակայն այն գործածված ենք գտնում Գովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի հետևյալ օրինակում. Հայր հորենացին զայրույթով հառնում / Ամայությունը գրի է առնում, / *Մագաղաթում էր՝* ինչ ամայնքվում էր՝ աչ ու ախյակում (էջ 108)<sup>13</sup>:

*Մահակնիք* գոյականը ԺՂԼԲ-ում բացատրվում է երկու իմաստով, սովորական՝ «մահվան դատավճիռ», և փոխաբերական՝ «մահ դրոշմող, մահ տարածող», և բերվում է բնագրային վկայություն Ա.Կապուտիկյանից. «Մեծ

<sup>12</sup> Օրինակ վերցված է բանաստեղծի «Քնար Հայաստանի» ժողովածուից (հ. 2, Երևան, 1964, էջ 225): Գմտ. *Ս.Ա.Սելբոնյան*, Գովհաննես Շիրազ (գեղարվեստական վարպետության հարցեր), Երևան, 1993, էջ 159:

<sup>13</sup> Քանի որ *մագաղաթել* ներգործական սեռի բայածև չկա հիշյալ բացատրական բառարաններում, այլ կա միայն *մագաղաթվել* կրավորակերպ չեզոք սեռի ձևը, ուստի գտնում ենք, որ այն կարելի է ընդգրկել «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարանի մեջ:

եղեռնը նրա գերդաստանն էլ է տրորել *մահակնիք* (իր) ոտքերի տակ»: Բառը էԱԲ-ում ունի ավելի լայն բացատրություն, քան ԺՅԼԲԲ-ում: Իբրև գոյական, նախորդի նման, ունի երկու իմաստ, սովորական՝ «մահվան դատավճիռ, մահապատժի վճիռ», այլև փոխաբերական, *բնստ.* (= բանաստեղծական) նշումով՝ «դատավճիռ, մի բանի դատապարտելու վճիռ», և բերվում է Պ. Շելլիից կատարված մի թարգմանությունից. «Դա է...մարդկության ստրկության *մահակնիք*», իսկ իբրև ածական, ընդ որում փոխաբերական՝ «մահով կնքող, մահ դրոշմող, տարածող՝ սփռող» իմաստով, և նշվում է բնագրային նույն վկայությունը՝ Ս. Կապուտիկյանից: Այս բառը բազմիցս գործածված ենք գտնում Յովի. Շիրազի «Յայոց դանթեականը» պոեմում. Ու թողնում էինք աղոթքն ու անցնում, / Ոսկրակույտերում դեռ *մահակնիք*» (էջ 114): Երբ Մասիսն անգամ՝ հայոց զանգը մեծ, / Քար լռությամբ էլ իր *մահակնիք*՝ / Ղողանջեց, որպես Աստծո բանաստեղծ... (էջ 134): Ելած Իզմիրից դեռ դիակուտակ, / Ապա՝ Բիթլիսից դեռ *մահակնիք* (էջ 214): Եվ անցնում էինք / Չանդրի ծորով դեռ *մահակնիք* (էջ 240): Ով առեղծվածի շնական շրթունք, / Այս ի՞նչ է իրավ, ով *մահակնիք* (էջ 290): Եվ լուսինը դեռ զարհուրիկ / Մեր պատմության *մահակնիք* / Մագաղաթի մի էջն է ցուրտ (էջ 334) և այլն: *Մահակնճիռ* բառն, ըստ ԺՅԼԲԲ-ի, ածական է, նշանակում է «Մահից՝ կոտորածներ տեսնելուց կնճիռներով պատված» և բնագրային վկայություն է բերվում Յովի. Շիրազի հետևյալ օրինակը. «Կույս երկունքով քո հանճարի ամնահության կնիք դրեց *մահակնճիռ* ճակտին հայոց»: Իսկ էԱԲ-ում այն ունի նախ՝ *բնստ.* (= բանաստեղծական) նշումը, այնուհետև «մահից՝ մահացածությունից՝ կոտորածից կնճռոտված, կոտորածներ տեսնելով կնճիռներով պատված» բացատրությունը, և վկայակոչվում է Շիրազի ճիշտ նույն օրինակը<sup>14</sup>: Այս բառը գործածված ենք գտնում նաև «Յայոց դանթեականը» պոեմի հետևյալ նախադասության մեջ. Դեռ քայլում էինք հուշընթաց ճամփով, / Ուր ճշում էին եղեռնադաշտերն այն *մահակնճիռ* (էջ 224):

*Մահաստան* բառն, իբրև գոյական, ըստ ԺՅԼԲԲ-ի նշանակում է «մահվան երկիր, սպանդանոց», վկայակոչելով Գ. Էմինի հետևյալ օրինակը. «Երբ որբերը Արաքսն անցան, / Մահաստան էր Յայաստանում»: ԷԱԲ-ում այն ունի նախ՝ *բնստ.* (= բանաստեղծական) նշումը, այնուհետև բացատրվում է երեք իմաստով՝ ա) «տեղ՝ վայր, որտեղ մահն է տիրապետում, մահվան թագավորություն, մահվան՝ կոտորածի՝ մահաճարակի երկիր», և բնագրային վկայություն է բերվում Գ. Էմինի վերը նշված նախադասությունը, այս անգամ «Երբ որբերն Արաքս անցան, մահաստան էր Յայաստանը» ձևով, բ) «կոտորածի, մարդկանց

<sup>14</sup> Միայն մեկ տարբերությամբ, այն է՝ բերված օրինակում եղած *հայոց*-ը փոխարինված է *հայի* ձևով: Ի դեպ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս բառը հիշյալ երկու բառարանում հանդիպում է միայն Յովի. Շիրազից երկերից քաղված վկայությամբ, այն կարելի է դիտել իբրև հեղինակային նորակազմություն:

կոտորելու տեղ, սպանդանոց», և բնագրային վկայություն է բերվում «Գրական թերթից»՝ «Քշեցին դեպի սուրիական անապատի մահաստանները», և գ) հզվդ. (= հազվադեպ) նշումով՝ «գերեզմանոց», առանց բնագրային վկայության: Այս բառը գործածված ենք գտնում նաև Գովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի հետևյալ նախադասության մեջ. Ձերն անապատն է Դեր Ձորն՝ Հայաստան, /Հայն անգլուխ է՝ ընդդեմ Դուրանի, / Սասիսի մոտն էլ կանենք... մահաստան (էջ 234):

Վերը քննության առնված բառերն ուշադրության են արժանի նաև մեկ այլ կողմով, այսինքն՝ դրանք բառարաններում բնագրային ինչ վկայություններով են ամրագրված: Ըստ այսմ բերված բառերը կարելի է բաժանել մի քանի խմբի: ա) Գովհ. Շիրազի մեկ ուրիշ ստեղծագործության վկայակոչումով ամրագրված բառեր՝ բոունցքվել, խաղաղատենչ, ծաղկածով, ծնկայոքել, հազարազանգ, հայահառաչ, հոգեխոռով, հուշաշխարհ, մագաղաթել, մահակնճիռ, ոգորանք, սրտասև, տիեզերավիշտ, ուղտընթաց և այլն, բ) Գովհ. Շիրազին երկու-երեք տասնամյակով նախորդող հեղինակների (Ավ. Իսահակյան, Ստ. Ջորյան) վկայակոչմամբ ամրագրված բառեր՝ հավերժվել, պատժավայր և այլն, գ) Գովհ. Շիրազին սերնդակից հեղինակների (Ս.Խանգաղյան, Վ. Խնչումյան, Գ. Էմին, Ս.Կապուտիկյան) վկայակոչումով հիմնավորված բառեր՝ գալլառհմակ, թրահար, եղեռնապատում, հազարակնյա, մահակնիք, մահաստան, մանկաբարձ, մեղսական, պտուտահողմ, սմբակահար, ցեղասպան այլն, դ) Դասագրքերից և մամուլից քաղված օրինակների վկայաբերումով ամրագրված բառեր՝ թրախաչ, կիսակենդանի, մշուշվել, սևամպ, վահանվել և այլն:

Նկատելի է նաև այն, որ ժամանակակից գրական հայերենի բառապաշարի այդ մասը հիմնավորվում է նաև Գովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի տվյալներով, ուստի նման միավորներին անդրադառնալը տեղին է ոչ միայն կոնկրետ հեղինակային, այլև առհասարակ ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի համալրման և հարստացման առումով: Ընդ որում դրանց մեծ մասն այսօր ևս կենսունակ է, ունի համեմատաբար լայն գործածություն: Իսկ մի քանիսը թերևս կարելի է համարել նեղ, ոչ այնքան տարածված, այսինքն՝ այնպիսին, որ սովորաբար ունենում են լոկ բնագրից կախված, այսպես կոչված՝ դիպվածային գործածություն: Թե մեկ և թե մյուս կարգի բառերն, ինչ խոսք, հեղինակային են, ուստի անկախ նորակազմություն կամ կոնկրետ գործածություն լինելուց, դրանք աչքի են ընկնում հեղինակային ոճի, բանաստեղծական խոսքի առանձնահատկություններով: